

մանութեան եւ հրատարակութեան հայոց մէջ, նրա յիշատակը խնկելի կը մնայ մեզ համար» (78) — ստում է նա :

Ինչպէս երևում է, քաղաքական մտքի արթնացման այդ շրջանում հին Հռովմբ ոգեւորութեան ու նմանողութեան առարկայ էր ամբողջ աշխարհի համար: Մի շարք ակնաւոր դէմքեր զբաղում եւ ուսումնասիրում էին Հռովմի պատմութիւնը. օրինակ, Մոնտեսքիեօն գրում է իր հոշակաւոր «Գատողութիւններ Հռովմի մեծութեան եւ անկման մասին» աշխատութիւնը, Փրանսացի նշանաւոր պատմաբան Շարլ Ռօլլէնը՝ իր «Հռովմի պատմութիւն» շատ խոշոր գործը<sup>1)</sup> եւն. : Անգամ հնդկահայութեան վրայ Հռովմի տպաւորութիւնը շատ զօրեղ է եղել. ահաւասիկ Շահամիրեանը մի անհերքելի ապացոյցը դրա : Մի ուրիշ հնդկահայ վաճառական՝ Եղուարդ Ռաֆայէլ, նորից նոյն համակրութեամբ եւ խորին յարգանքով լցուած գէպի հին Հռովմը, առաջարկում եւ հարկաւոր գումարը տրամադրում է նախ Վենետիկ, բայց սրանցից պատասխան չստանալով, յետոյ Տրիեստի Մխիթարեաններին՝ թարգմանել Ռօլլէնի «Հռովմի պատմութիւնը», վաճառքից զոյացած ամբողջ գումարը — 75,000 հնդկական ռուբի կամ մօտաւորապէս 35,000 ռուսական ռուբլի — թողնելով նրանց 2) :

Ազդեցութիւնների ցանկում չմոռանանք յիշատակել նաեւ Ամերիկայի Ազատութեան պատերազմը, որ տեղի ունեցաւ Շահամիրանի օրով եւ կատարւում էր — այսպէս ասած — նրա աչքի առջև : Պատերազմի վախճանը «Որ. Փառաց»ի գրութեան ժամանակ թէեւ տակաւին յայտնի չէր, բայց ինքը պատերազմը համակրութեան առարկայ էր ամէնքի համար,

1) Տրեդեակովսկու ռուսերէն թարգմանութիւնը 26 հատորից է (Պաւլենկով, Հանրագիտակ բառարան) :

2) Տրիեստցիները գումարի մի մասը նոյնիսկ ստանում են կանխիկ, բայց, դժբախտաբար, իրենց այդ զեղեցիկ պարտականութիւնը չեն կատարում : Ռօլլէնի հայերէն թարգմանութիւնը լոյս տեսաւ բաւական յետոյ, 1815 թ., Վենետիկի Մխիթարեանների ձեռքով : (Ահօ՝ «Հայկ. Տպագր.» Բ.) :

մասնաւորապէս մեր հեղինակի համար, որ մի առանձին ջերմութեամբ է արտայայտում Ամերիկայի ազատասէր ժողովրդի եւ նրա առաջնորդ «Իմաստուն Վաշինկթընի» մասին : «Եւ այժմ լսում ենք մի նոր բորբոքման մասին — գրում է նա : Վաշինկթըն անունով իմաստուն մէկը, ծնուած Ամերիկայում, ապրտամբելով մեծ Բրիթանիացւոց դէմ, հաւաքել է շատ զօրք Ամերիկայի ժողովրդից եւ ջանում ու աշխատում է ազատութիւն ձեռք բերել եւ լինել անկախ : Թէեւ գործի վախճանը դեռ եւս յայտնի չէ, բայց Ամերիկացոց սրտի ցանկութիւնը բնական է մարդկային բնութեան համար, որովհետեւ աշխարհիս երեսին մարդու բոլոր ունեցուածքների մէջ չկայ մէկ աւելի քաղցր բան, քան ազատութիւնը» (138) :

Որ վերոյիշեալ գործօններից իւրաքանչիւրն իր ազդեցութեան բաժինն ունի մեր հեղինակի մտքերի ու զգացմունքների վրայ — կարծում ենք՝ կասկածից դուրս է : Սակայն ամենից գլխաւոր աղբիւրը, որից քաղել է նա իր այդ զեղեցիկ դադափարները, իր ապրած միջավայրն է, ուրիշ ինչքով՝ անգլիական ազդեցութիւնը : Ինքն էլ շատ անգամ խոստովանում է, թէ իր սեպհական գլխից չէ, որ հանում է այդ մտքերը եւ կամ վերացական ու անմարմին դադափարներ չեն նրանք, այլ ինչ որ լսել է, կարդացել եւ մանաւանդ տեսել է իր իսկ աչքերովը, այն էլ առաջարկում է որպէս սպեղանի հայ ժողովրդի վէրքերի :

Մի շարք պոէմանների եւ գլխաւորապէս քաղաքական ազատ կարգերի շնորհիւ՝ Անգլիան մի աննախընթաց հմայք էր ձեռք բերել ամբողջ քաղաքակիրթ աշխարհի աչքում — սկսած Թէ. դարի վերջերից, մանաւանդ ԺԼ-ի սկիզբներից : Նոյնիսկ Փրանսան, որ Լուզովիկոս ԺԳ-ի օրով թաղաւորում էր բոլոր ժողովուրդների մտքերի ու ճաշակների վրայ եւ նմանողութեան առարկայ էր ամէնքի համար, այդ Փրանսան անգամ գտնւում էր անգլիական խաբի զօրեղ ազդեցութեան տակ, ԺԲ. դարի առաջին քառորդից սկսած :

Ուսուցչապետ Վիպպեր զեղեցիկ կերպով նկարագրում է այդ գրութիւնը իր նոր պատմութեան զբքում. «Լուզովիկոս ԺԳ-ի պարտութիւնից յետոյ (Անգլիայից), այս երկիրը դառնում է բոլոր Փրանսացի մտածողների հա-